Հաստատում եմ
Շենավանի միջնակարգ դպրոցի
տնօրեն՝
Հ. Եղիազարյան

14.06.2023 թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԿԱՐ ՈՒ ՉԵՒ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

60 ժամ՝ շաբաթական 2 ժամ 5-7-րդ դասարանների համար Խմբակավար՝
Լիլիթ Այվազյան

2023-2024 ուս.տարի

Խմբակի նպատակն է՝

• Զարգացնել ստեղծագործական կարողությունները, ճանաչողական գործընթացները՝ երևակայություն, մտածողություն, հիշողություն, ուշադրություն։

• Ծանոթացնել մեքենայական և ձեռքի կարատեսակներին, կարելու աշխատանքների պլանավորման գործընթացին։

• Ձեռքերի նուրբ շարժիչ հմտությունների զարգացում։

• Նպաստել նյութերի մշակման գործնական հմտությունների յուրացմանը։

• Ձևավորել կատարողականի գնահատման հմտություն։

• Զարգացնել դեկորատիվ աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, ստեղծագործական ինքնարտահայտման անհրաժեշտությունը։

Խնդիրները

• Գործնական ստեղծագործական աշխատանք կատարելիս ինքնուրույն աշխատանքի և խմբում աշխատելու հմտության ձևավորում։

• Ծանոթանալ կարի տեսակներին։

• Ճանաչել և գործածել կարելու համար անհրաժեշտ գործիքները։

• Կարողանալ տարբերակել մանրաթելերի և գործվածքների տեսակները։

•Ծանոթանալ կարի տեսակներին, հագուստի մոդելավորմանը և կոնստրուկտավորմանը։

•Սովորել կարել պարզագույն գոգնոցներ, գլխարկներ, կիսաշրջազգեստներ, խոհանոցային պարագաներ։

Վերջնարդյունքները

• Ցուցադրել կար ու ձև խմբակի երեխաների սեփական մտահղացմամբ ստեղծված աշխատանքները ցուցահանդեսին։

• Կար ու ձև խմբակը ստեղծվել է երեխաների մոտ աշխատանքային հմտությունները զարգացնելու նպատակով:

ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ ԽՄԲԱԿԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԲԱԺԻՆ 1

ԿԱՐ ՈՒ ՁԵՎ 20 ԺԱՄ

Նպատակը՝

• Ծանոթացնել մեքենայական և ձեռքի կարատեսակներին:

• Կարողանա կատարել պարզ և բարդ կարատեսակներ:

• Ծանոթացնել ձեռքի կարակութերի և թակալակարերի տեսակներին(եզրակար, մաքրակար, բլանդ կար, խաչկար, պատճեահանման կար, օղակակար):

• Կարողանալ ճիշտ ընտրել ասեղները և թելերը:

• Կարողանալ կարի մեքենայով կատարել վարժություններ:

1. Մեքենայական և ձեռքի կարատեսակներ կատարելու հմտություններ: 5 ժամ

2. Ձեռքի կարատեսակներ: 3 ժամ

3. Ձեռքի կարատեսակերին և կարակութերին ներկայացվող տեխնիկական պահանջները: 4 ժամ

4. Մեքենայի կարատեսակներ: 3 ժամ

5. Մեքենայի կութերին և կարատեսակներին ներկայացվող պահանջները: 3 ժամ

6. Աշխատանքի անվտանգության կանոները կար անելիս: 2 ժամ

Վերջնարդյունքները՝

• Կարողանալ գործվածքի վրա ձեռքի կարատեսակներով վարժություններ կատարել:
• Պարզագույն եզրագծային նախշերի գործում ձեռքի կարատեսակներով:

• Գործվածքեղենի եզրերի հարդարում տարբեր ձեռքի և մեքենայական կարերով:

• Կարողանալ կարի մեքենայով կատարել մաքոքային հյուս կարատեսակները:

ԲԱԺԻՆ 2 ԳՈՐԾՎԱԾՔ և ԿԱՐՎԱԾՔ 20 ԺԱՄ

Նպատակը՝

• Տարբերակել բնական և արհեստական գործվածքները:

• Կարողանալ հագուստի չափսեր վերցնել:

• Կարողանալ պատրաստել կարվածքի ձևվածքներ:

• Կարողանալ կատարել վերջնամշակում և որակի ստուգում:

1. Կարվածքների մշակման համար անհրաժեշտ գործիքներ և պարագաններ: 2 ժամ

2. Նորածին երեխայի գոգնոցի և գլխարկի գծագրի կառուցում: 4 ժամ

3. Ձևանների պատրաստում: 3 ժամ

4. Ձևելու հաջորդականությունը: 3 ժամ

5. Դետալների միացումը մեքենայական կարերով: 2 ժամ

6. Մոդելավորում: 4 ժամ

7. Մեքենայի հետ աշխատելու անվտանգության կանոնները: 2 ժամ

Վերջնարդյունքները՝

• Կարողանալ մաստշտաբային չափերով կարել կիսաշրջազգեստներ:

• Կարողանալ ինքնուրույն մոդելավորել խոհանոցային պարագաններ և կարել:

• Կարողանալ աշխատել կարի մեքենայով:

• Կարողանալ կատարել դետալների միացում մեքենայական կարով:

• Պատրաստի կարվածքի որակի ստուգում, կատարված աշխատանքների վերջնական մշակում:

ԲԱԺԻՆ 3 Գոտկային կարվածքներ: 10 ԺԱՄ

Նպատակը՝

• Կարողանալ գծել գծագիրը մասշտաբային չափսերով։

• Կարողանալ պատրաստել ձևաններ։

• Կարողանալ նախապատրաստել չափափորձման։

• Կարողանալ կատարել խոնավաջերմային մշակում։

1. Գոտկային կարվածքների տեսակները։ 2 ժամ

2. ՈՒղիղ, ծալքերով, չորսկտորանի, վեցկտորանի, արեգակնաձև կիսաշրջազգեստների գծագրի կառուցումը։ 3 ժամ

3. Ձևանների պատրաստում։ 1 ժամ

4. Ձևելու հաջորդականությունը։ 1 ժամ

5. Դետալների միացումը մեքենայական կարերով։ 2 ժամ

6. Մոդելավորում։ 1 ժամ

Վերջնարդյունքները՝

• Կարողանալ ինքնուրույն մոդելավորել գոտկային կարվածքերը։

• Կարողանալ կատարել դետալների միացում՝ մեքենայական կարով։

• Պատրաստի կարվածքի որակի ստուգում, կատարված աշխատանքների վերջնական մշակում։

ԲԱԺԻՆ 4 Խոհանոցային պարագաներ։ 10 ԺԱՄ

Նպատակը՝

• Ինքնաշեն պարագաների պատրաստում։

• Կարողանալ պատրաստել ձևաններ։

• Կարողանալ նախապատրաստել չափափորձման:

• Կարողանալ կատարել խոնավաջերմային մշակում:

- Խոհանոցային պարագաներ պատրաստելու տարբերակներ՝ բռնիչներ, սրբիչներ, թաթմաներ, խոհանոցային գոգնոց, գլխաշոր: 3 ժամ
- Մոդելավորում: 1 ժամ
- Ինքնաշեն պարագաների պատրաստում: 2 ժամ
- Ասեղաման: Էկոպայուսակներ: 3 ժամ
- Տարբեր մոդելների պատրաստում: 1 ժամ

Վերջնարդյունքները՝

• Կարողանալ ինքնուրույն մոդելավորել խոհանոցային պարագաները, էկոպայուսակները:

• Կարողանալ կատարել դետալների միացում՝ մեքենայական կարով:

• Պատրաստի կարվածքի որակի ստուգում, կատարված աշխատանքների վերջնական մշակում: